


1 + 1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 թ. թիվ 9(9)

ԱՎԴԱԼՅԱՆ ՉԱՎԵՆ ԳՐԻՇԱՅԻ **/մականունը Մարիֆաթ, որը նշանակում է ազնիվ, շնորհալի մարդ/**

Մեզ բախտ վիճակվեց գրուցել Ղարաբաղյան պատերազմի հերոսի հետ: Նա առանձնահատուկ հետաքրքրությամբ էր պատմում իր կյանքի և անցած ճանապարհի մասին:

-Որտեղի՞ց եք ծագումով:
-Ես ծնվել եմ Վարդենիս քաղաքում, հողագործի ընտանիքում: Բանակում ծառայելուց հետո վերադարձել եմ հարազատ տուն ու զբաղվել հանրօգուտ աշխատանքով: Իմանալով մեր երկրին սպառնացող վտանգի մասին՝ ես էլ միացա հայոց համազգային շարժմանը:

Այդ թվականներին մենք 36000 թուրք ենք դուրս հանել երկրից: Պայքարել ենք կողք-կողքի տարբեր շրջանների հայրենասերների հետ, փառքով ազատագրել ենք Քարվաճառը: Ես մասնակցել եմ նաև Աղդամի ու Մարտակերտի ազատագրմանը:

Շատ մարտական ընկերներ եմ կորցրել, կռվի տարիներին կորցրել եմ նաև եղբորս՝ Վազգենին՝ Ջոդի սահմանները պաշտպանելիս:

-Ինչ էլ լինի՝ մեր անկախությունը պիտի պահպանենք, -ասում է Ջավենը /Մարիֆաթը/, -ես ոչ մի բանից չեմ վախենում և չեմ վախեցել, միայն կուզեմ, որ ներկա սերունդը գնահատի մեր հայրենավեր գործը ու արժանավայել շարունակի այն:

-Ասեմ ձեզ, որ ես երջանիկ եմ ու հարուստ, բայց հարստությունը չի չափվում փողի արժեքով: Ես հարուստ եմ իմ թոռներով ու երեխաներով, ովքեր ինձ համար մի ամբողջ կյանք են, ու ես գիտեմ՝ հանուն ինչի եմ ապրում:

-Ի՞նչն էք ամենաշատը արժևորում մարդու մեջ:

-Առաջին հերթին՝ հայրենասիրությունը: Իսկական հայրենասեր մարդը տարբերվում է իր աշխարհայացքով ու անկեղծությամբ: Ես դպրո-



ցում աշխատել եմ որպես տնտեսվար, հետո՝ որպես պահակ, ինձ շատ հարգում ու սիրում էին մեր ուսուցիչները: Պահեր են եղել, որ ինձ հրավիրել են, ու ես պատմել եմ երեխաներին իմ կռիվների մասին, և նրանք հիացնումքով էին ինձ լսում: Դպրոցներում պետք է հայրենասիրություն սերմանեն:

Մենք պատերազմ տխուր չէինք գնում, ու մեր աչքերում արցունք չէր լինում: Ամեն կռվից առաջ երգն ու պարը խլացնում էին մեր վախերը ու ոգևորում մեզ:

- Ի՞նչ դրվագներ եք հիշում մանկությունից:
Այդ ժամանակները կյանքը պակաս դաժան չէր՝ չորս տարեկանում ավտովթարից կորցրել եմ հորս: Մայրս 23 տարեկան էր, մնաց մեծակ 3 երեխաների հետ միասին, շատ դժվար ժամանակներ էին, բայց մայրս միշտ մեր կողքին էր, մեզ պաշտպան է կանգնել, երբ որ պետք է եղել:

Հենց մայրս է դաստիարակել իմ մեջ կյանքի ուժը ու հայրենասիրության ոգին:

-Ի՞նչ երազանք ունեք:
-Ես միայն ուզում եմ խաղաղություն հայրենիքիս ու հայ ժողովրդիս:

-Ի՞նչ խորհուրդ կտաք մեր ապագա զինվորներին:

-Տղերքը մեզանից վատ չեն կռվում, բայց մեր փորձը. ամեն դեպքում պետք է, որպեսզի վրիպումներ թույլ չտան, դրա համար մեզանից մեկը պետք է լինի նրանց կողքին:

-Ո՞վ է Ձեր հերոսը:
-Իմ հերոսը Վազգեն Սարգսյանն է:

-Ի՞նչ է Ձեզ համար հայրենիքը:
-Հայրենիքը իմ տունն է, իմ օջախը, իմ սրբությունը, իմ աստվածը:

-Ի՞նչպես հարենասիրություն սերմանել մեր սերնդի մարդկանց հոգիներում:

-Հայրենասիրությունը չի սահմանափակվում միայն սահմաններ պահելով, այն դրսևորվում է տարբեր բնագավառներում, և դա պետք է սովորեցնենք մատաղ սերնդին արդեն մանկապարտեզի տարիներից:

Իսկ ինչպե՞ս եք վերաբերվում այն մարդկանց, ովքեր իբր թե սոցիալական խնդիրների պատճառով լքում են հայրենիքը՝ որտեղ հաց, այնտեղ կաց:

-Ոչ ոք իրավունք չունի մարդկանց քննադատել, դա յուրաքանչյուր մարդու ընտրությունն է, բայց ես մեծ հարգանքով եմ վերաբերվում այն մարդկանց, ովքեր, գտնվելով հեռվում, չեն մոռանում իրենց հայրենի հողի մասին և փորձում են իրենց ներդրումն ունենալ հայրենիքի զարգացման գործում:

ԱՆՆԱ ԳԼՈՐԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԳԼՈՐԳՅԱՆ
Վարդան Արախանյան

ԱՆՈՒՆԸ ՄԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ

Ահա և աշունը՝ իր գեղեցիկ գույներով, եկավ ու գունազարդեց շուրջըլորը, բերք ու բարիք պարգևեց, բայց բերեց նաև թախիժ ու տխրություն:

Գեղեցիկ է իմ գյուղը, իսկ աշունը իր ոսկեգոծ գույներով էլ ավելի է գեղեցկացրել ու առանձնահատուկ դարձրել այն: Բայց ահա զգացվում է աշնան վերջին շունչը, օրեցօր խամրում են աշնանային վառ գույները: Ծառերի մերկությունը, մռայլ երկինքը խոսում են աշնանային տխրության մասին:

Օրեր առաջ գյուղում տիրող եռուզեռն արդեն դադարել է, մարդիկ իրենց աշխատանքի պտուղներն հավաքել, վերջացրել են, բայց դեռ ամեն ինչ առջևում է: Շուտով դիմավորելու ենք ցրտաշունչ ձմեռը, որն իր ձերմակության հետ մեկտեղ բերում է նոր խնդիրներ:

Ամեն մեկը իր հնարավորության

սահմանում միջոցներ է ձեռնարկում՝ ձմռանը քեռուցում ապահովելու համար: Ահա ես տեսնում եմ, թե ինչ հարազատները ինչպես են պատրաստվում ձմռանը: Նրանք կտրում են ծառերի չորացած ճյուղերը: Հեռվից թվում է, որ հեշտությամբ է կատարվում այդ աշխատանքը, բայց դա ևս շատ դժվար է: Ծյուղերն հերթով մանրացնում են և գեղեցիկ դասավորում: Այս միջոցով փորձում են ելք գտնել:

Ի վերջո, ամեն մեկը յուրովի է պատրաստվում, քայլեր ձեռնարկում՝ ամեն տեսակ հոգս ու խնդիր հաղթահարելու համար:

Սյուզաննա
Հակոբյան **1**

ՄԵՐ ՓՈՔԻ ԾԻԼԵՐ ՓԱՅՓԱՅՈՂՆԵՐԸ



Արևաշող ու պայծառ առավոտ էր։ Մենք բարձր տրամադրությամբ գնում էինք Երանոս։ Գյուղ մտնելուն պես ուղևորվեցինք դպրոց, որի շենքային պայմաններն ուղղակի անհամեմատելի են մեր գյուղի դպրոցի հետ։ Հանդիպեցինք Երանոսի թիվ 1 դպրոցի տնօրեն պարոն Ադամ Փինաչյանի հետ։

Մեր գրույցի թեման բազմաբովանդակ էր՝ մարդու արժեհամակարգը, ներկայիս սերնդի դաստիարակությունը, ուսուցչի աշխատանքը և դերը դպրոցում։ Նա իր պատասխաններում նշեց, որ մարդու մեջ արժևորում է մարդ տեսակը, որն էլ շատ կարևոր է այսօրվա սերնդի դաստիարակության գործում։ Մարդկային հատկանիշների մեջ առանձնացրեց լավատեսությունը, ազնվությունը և անկեղծությունը, իսկ դրանց հասնելու կարևորագույն միջոց է համարում ընթերցանությունը։ Պարոն Փինաչյանը անդրադարձավ նաև ուսուցչի աշխատանքին և կարևորեց այն հանգամանքը, որ ուսուցիչը պարբերաբար պետք է անցնի վերապատրաստումներ՝ ժամանակակից մեթոդներին տիրապետելու համար։ Վերապատ-

րաստումների արդյունքում այսօր ունենք մեթոդապես զարգացած ու բանիմաց ուսուցիչներ։ այս տարի մեր դպրոցի ուսուցիչներից տիկին Արզումանյանը Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի կողմից խրախուսվեց շնորհակալագրով՝ աշխատանքում որոշակի հաջողություններ արձանագրելու համար։

Ըստ պրն. Փինաչյանի՝ ուսուցիչը պետք է լինի աշակերտի ընկերը։ Ուսուցիչը աշակերտի համար պետք է մոդել լինի, օրինակ ծառայի։ Նա կյանքի օրինակ է, աշակերտը պետք է տեսնի նրա օրինակը և սովորի։ Զրույցի վերջում պարոն Փինաչյանը խորհուրդ տվեց աշակերտներին նվիրվել կրթությանը, զբաղվել ընթերցանությամբ, լինել հայրենասեր և հայրենամարտաշահներ։

Հանդիպեցինք նաև տիկին Արզումանյանի հետ։ Ծավալվեց հետաքրքիր գրույց, որի ընթացքում նա փորձառու ուսուցչի

վարպետությամբ և համեստ ժպտով պատասխանեց մեր բոլոր հարցերին։

Զրույցի ընթացքում անդրադարձանք գյուղի և քաղաքի երեխաների տարբերությանը, գրուցեցինք ուսուցչի դերի, ծնող-դպրոց փոխհարաբերության և հայրենասիրության թեմաներով։

Տիկին Արզումանյանը իր խոսքում նշեց, որ գյուղի և քաղաքի դաստիարակությունը կապված է միջավայրի հետ, գյուղի երեխաները ավելին են տրամադրված կրթության հարցում։ Նաև ծնողը պետք է կենտրոնանա երեխայի կրթության ու դաստիարակության վրա, ուղղորդի նրան՝ հաշվի առնելով երեխայի կարողություններն ու նախասիրությունները։

Թե ովքեր են ուսուցիչները հարցին, նա պատասխանեց։

Մենք փոքր ծիլերը փայփայող, խնամքով ջրող արև տվողներն ենք, բայց երբ գալիս է ժամանակը, պետք է պատվաստենք, որպեսզի դիմանա կարկուտին և քամուն և՛ գլխավորը, որ բերքառատ լինեն։

«Ես խորհուրդ եմ տալիս բոլոր մանկավարժներին՝ սիրեն և զնահատեն իրենց աշխատանքը, լինեն հմուտ մասնագետներ, իսկ աշակերտներին խորհուրդ կտամ սպունգի նման ընդունել բոլոր խորհուրդները ծնողներից, մեր տված գիտելիքները, և հաշվի առնելով, որ աշխարհը սրընթաց շարժվում է առաջ, համապատասխանել նրան։ Սովորել լավը բոլոր ազգերից և երկրներից, ճանաչել աշխարհը և գտնել իրենց տեղը աշխարհում առաջ մղելով մեր պետական շահերը ու անունը։

Շնորհակալություն ենք հայտնում պրն. Փինաչյանին և տիկին Արզումանյանին անկեղծ և հետաքրքիր գրույցի համար։

Մարիամ Մանուկյան
Արփինե Մխիթարյան



Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ /Բաղալները՝ Գեղարքունիքում/



Բաղալյանները գաղթել են 1889 թվականին Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառի Սուրբ Օհան գյուղից և բնակություն հաստատել Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում։ Այնուհետև՝ Սարուխանից 1920 թվականին Ջալիբեկին իր ընտանիքով՝ որպես կուլակների, արտոնել են Գեղարքունիք /Բաշքյանդ/, որտեղ էլ Ջալիբեկը բնակություն հաստատեց և ծաղկեցրեց իր գերդաստանը։

Ջալիբեկը ունեցել է 5 աղջիկ և 5 տղա՝ Խաչատուրը, Հայկազը, Գրիշան և Արշալույսը։ Հայկազը փոքր հասակում մահացել է, նրա մահից հետո երբ Ջալիբեկը որդի է ունեցել, նրան նույնպես Հայկազ անունն է կնքել, սակայն Հայկազը մեկնել է Հայրենական պատերազմ և չի վերադարձել։ Աղջիկներն են Հայաստանը, Պայծառը, Փառան-

ծենը, Արզուբանը և Փայլունը։ Խաչատուրը նույնպես մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և չի վերադարձել, ունեցել է 1 աղջիկ, 2 տղա՝ Խաչատուրը և Արմենակը։ Խաչատուրը ունի 2 տղա, Արմենակը՝ 1 տղա՝ Վազգենը։

Գրիշան ունեցել է 2 աղջիկ, 4 տղա՝ Միհրը /Էդիկը/, Աշոտը, Վանիկը և Գագիկը։ Միհրը ունի 2 աղջիկ, 1 տղա՝ Արայիկը, Արայիկը ունի 1 աղջիկ, 2 տղա՝ Էդիկը և Միհրը։ Աշոտը ունի 2 աղջիկ, 1 տղա՝ Կարենը, Կարենը ունի 1 աղջիկ, 1 տղա՝ Աշոտը։

Վանիկը ունի 2 աղջիկ, 1 տղա՝ Գրիշան, Գրիշան ունի 2 աղջիկ։

Գագիկը ունի 1 աղջիկ, 2 տղա՝ Մարտիրը և Հայկը, Մարտիրը ունի 1 աղջիկ, 1 տղա՝ Գագիկը։

Արշալույսը ունի 2 աղջիկ, 2 տղա՝ Համետը և Քաջիկը։ Համետը ունի 1 տղա՝ Ռաֆիկը, Քաջիկը ունի 1 աղջիկ, 1 տղա՝ Ռազմիկը։

ԻՄ ԸՆԿԵՐԸ

Մանկությունս անցավ՝ թողնելով քաղցր հիշողություններ մեր թաղից, մեր թաղի երեխաներից ու մեր մանկական խաղերից։ Պատանեկության շեմին ես ամեն օր հիշում ու մտածում եմ իմ լավագույն ընկերոջ՝ Նարեի մասին։ Նա շատ տաղանդավոր էր և շնորհաշատ գեղեցիկ պարուհի էր, խաղում էր կանոններին համաձայն, ուներ սեր դեպի սպորտը, սակայն, ցավոք, նա ուներ լեզվական խնդիր, ինչի պատճառով այժմ սովորում է մեկ այլ՝ հատուկ դպրոցում։ Ամեն օր դպրոց ոտք դնելիս ես հոգուս խորքում աղոթում եմ Աստծուն, որ հաջորդ տարի Նարեն մեզ հետ սովորի նույն դպրոցում։

Երբ տեսնում եմ՝ ինչպես են շատերը հանդիպում իրենց մանկության ընկերներին, գրկում միմյանց ու տարվում գեղեցիկ հիշողություններով, մի տեսակ բարի նախանձով է համակվում սիրտս։ Հիշում եմ, թե ինչպես էի հատուկ դպրոց ճանապարհում Նարեին ու խնդրում, որ մինչև վերջ պայքարի ու հավատա։ Նարեն գիտակցում էր իր լեզվական խնդիրների մասին, նաև գիտակցում էր, որ եթե լուրջ վերաբերվի հատուկ մասնագետներին, ապա իր խնդիրներն այլևս խնդիրներ չեն լինի, և ամեն ինչ կմնա մանկության գրկում։

Նարեն ինձ խոստացել էր, որ ինչ էլ լինի, միևնույն է, ընկերներ ենք մնալու և միասին կիսելու ենք մեր տխրությունն ու ուրախությունը։ Եթե այն ժամանակ մենք իրար հասկանում էինք ժեստերի ու դիմախաղի օգնությամբ, ապա Նարեի վերադառնալուց հետո հասկանալու ենք բառերի օգնությամբ։

Ես հավատացած եմ, որ

նա շուտով միանալու է մեզ, որովհետև հավատում է իր ուժերին։ Այս դեպքում հավատը լավագույն դպրոցն ու ուսուցիչն է, և այն մեզ օգնելու է հասնել մեր գերագույն նպատակին, ու Նարեն շուտով մեզ հետ է լինելու։

«1+1» թերթի խմբագրությունը առողջություն է ցանկանում Նարեին և շուտափույթ վերադարձ բնականոն կյանք։

գ. Գանձակ
Սարգսյան Սվետլանա
6-րդ դասարան



Արման Վարդանյան



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները շնորհավորում են նույն դպրոցի շրջանավարտ, այժմ հայոց բանակի զին-

վոր Արման Վարուժանի Վարդանյանին ծննդյան օրվա առթիվ: Մենք հպարտ ենք, որ մեր գյուղացիները պատվով են կատարում իրենց պարտքը:

Օրերս Գեղարքունիքի միջնակարգ դպրոց այցելեց Ռդուն բնակվող մեր համագյուղացի Ռուբիկ Ումրշատյանը: Նա այդ դպրոցի սան է, երկար ժամանակ բացակայել է Հայաստանից, բայց կապը միշտ պահել է հայրենիքի հետ:

Նա մտահոգություն հայտնեց, որ դպրոցի շենքային պայմանները չեն համապատասխանում կրթական նորմերին. փաստորեն տարիների ընթացքում համարյա ոչինչ չի փոխվել: Նա պատրաստակամություն

հայտնեց հնարավորինս աջակցել դպրոցի խնդիրների լուծմանը, և դա համարեց կարևորագույն խնդիր, որը պահանջում է շուտափույթ լուծում:

ՏԱՐԱՁ

Տղամարդու հայկական տարազ

Տարազը բաղկացած էր երկու հիմնական բաղադրիչներից՝ ուսային / շապիկ, բաճկոն, մուշտակ / և գոտիկային / տաբատ, շալվար /: Հայերը զարդարում էին շապիկի օձիքը ասեղնագործ գեղազարդերով: Հագուստը հիմնականում կարում էին բամբակյա գործվածքից, իսկ արևմտահայերը օգտագործում էին այծի բուրդը: Ավանդական հագուստ էր համարվում չոքեզին, որը կրում էին շապիկի և բաճկոնի վրայից: Առանց չոքեզի երևալը հասարակական վայրում նույնիսկ շոգ եղանակին համարվում էր անընդունելի: Ամենատարածված գլխամոցները պատրաստվում էին գառան մորթուց:

Կանացի հայկական տարազ

Կանացի արտաքին հագուստը եղել է բավականին բազմազան՝ զգեստները /արձակ և ոչ արձակ/, բաճկոնակներ և անթև հագուստներ: Զգեստները կարում էին սատինից, մետաքսից, թավշից: Կանացի հագուստը զարդարված էր ասեղնագործ գեղազարդերով, իսկ բարձր խավի ներկայացուցիչները զարդարում էին իրենց հագուստը ոսկե և արծաթե մանրաթելերով: Ոսկերչական բանվածքները պահվում էին խնամքով և փոխանցվում էին սերնդեսերունդ: Հայաստանի արևելյան շրջաններում ապրող կանայք կարմիր և երկար շապիկի տակից կրում էին կարմիր և երկար տաբատներ, որոնց ստորին մասերը կարված էին ավելի թանկարժեք գործվածքից:

Արևմտյան Հայաստանի կանանց զգեստները ձևով համարյա նույն էին, սակայն ունեին որոշակի տարբերություններ՝ շապիկը սպիտակ էր, օգտագործվում էր ասեղնագործությունը, պարտադիր ներկա էր զոգնոցը: Առանձնահատուկ գեղեցկություն ունեին թավշից և մահուդից պատրաստած զոգնոցները: Զարդարանքներից կարող ենք նշել մանյակը, արծաթե ապարանջանը:

Բոլորս գիտենք հայկական տարազի մասին, սակայն չգիտենք, թե ինչպե՞ս է առաջացել տարազը, ի՞նչ նշանակություն ունեն տարազների երանգները և այլն: Ես ևս չատ բան չգիտեի տարազի մասին և սկսեցի տեղեկություն հավաքել մի շատ հետաքրքիր պատճառով:

Ես շատ եմ սիրում նկարել և նկարում եմ տարբեր թեմաներով: Երեկո էր, ցանկացա նկարել ու մտքիս եկավ տարազ՝ նկարել: Նկարելու ընթացքում սկսեցի հետաքրքրվել տարազին վերաբերող տեղեկությամբ: Համակարգչով նյութեր որոնեցի տարազների մասին: Ըստ նյութերի՝ տարազը պատմական տարբեր դարաշրջաններում զանազան ժողովուրդներին, էթնիկական և տարածքային խմբերին, բնակչության որոշակի շերտերին բնորոշ հագուստ է՝ ձևվածքի, գույնի, նյութի տեսակի, արտաքին հարդարանքի առանձնահատկություններով: Յուրաքանչյուր ժողովրդի տարազ պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, ազգային բնույթով, կենցաղով, տվյալ երկրի բնական արտադրանքով:

Հայկական տարազի մեջ գերակշռում են երկրի չորս տարրերի՝ հող, ջուր, օդ և կրակ, գույները, որոնք, 14-րդ դարի հայ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու վկայությամբ, արտահայտում են երկրի սևությունը, ջրի սպիտակությունը, օդի կարմիրը, և հրի դեղինը: Հայաստանի յուրաքանչյուր զավառ առանձնանում է իր տարազով: Հայկական ստեղծագործության հայտնի կենտրոնները՝ Վան, Վասպուրական, Կարին, Շիրակ, Սյունիք-Արցախ, Կիլիկիա, առանձնանում են զարդաձևերի, գունային համադրության և ամբողջ հորինվածքի ռիթմով ու ոճով: Տարազը առանձնանում է իր յուրահատուկ գեղեցկությամբ և մեր օրերում ունի կիրառություն, որը հագուստը, կոշիկը, պայուսակը կամ այլ աքսեսուարներ դարձնում է ավելի նորաձև և գեղեցիկ:

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՐԻՉԸ

Ես Գևորգն եմ: Ապրում եմ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղում: Սովորում եմ տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում: Սովորում եմ լավ:


Սիրում եմ նկարել և ազատ ժամերին զբաղվում եմ նկարչությամբ: Իմ նկարներն ինձ շատ հոգեհարազատ են: Նկարներիս միջոցով արտահայտում եմ իմ զգացմունքները բնության, հայրենիքիս, մարդկանց առօրյա աշխատանքի մասին:

Կյանքը ծնվել և զարգանում է հողից: Ես սիրում եմ իմ գյուղը, այստեղ եմ ապրել և արարել մեր մեծերը, կարևորում եմ իմ գյուղի արժեքները:

Պապիկս ինձ շատ է պատմել գյուղական աշխատանքների մասին և մեծ սեր է իմ մեջ սերմանել գյուղիս հանդեպ:

Իմ այս նկարում փորձել եմ պատկերել հայրենի բնությունն ու հայրենի տունը, մեր անցած և ներկա աշխատանքը:

Ես մեծ ցանկություն և նպատակ ունեմ ցուցահանդես կազմակերպել և այնտեղ ցուցադրել իմ նկարները:



Նկարի և նյութի հեղինակ՝
Գևորգ Գևորգյան

3

ՄԵՐ ՄԵԾԵՐԸ
/Կոմիտաս-150/

Ազգը հզոր է իր մեծերով: Կոմիտասը հայ ժողովրդի մեծերից է, այն զարկերակներից, որից մշտապես սնվում է հայ մշակույթը:

Պատմության ողջ ընթացքում, երբ հուսահատության ձմեռը փորձում էր գաղեցնել մեր ժողովրդի հույսն ու պալիքի երազանքը, Կոմիտասն այն ձնծաղիկն էր, որ իրենով զարուն բերեց, ջերմացրեց ու ապրեցրեց մեզ՝ դառնալով երաժշտության Մեարոպ Մաշտոց, հայոց երգի վեհափառ։ Կոմիտասի ծննդյան 150-ամյակին էր նվիրված օրերս Գեղարքունիքի միջ-նակարգ դպրոցում կազմակերպված գրական-երաժշտական ցերեկույթը։ Ցերեկույթի ընթացքում հնչեցին զմահատանքի ու երախտագիտության այն խոսքերն ու մտքերը, որոնք արտահայտել են մեր՝ ականավոր երգահաններն ու մտավորականները։ Մահանկիցների շուրթերից հնչեցին Կոմիտասի՝ մեղրածոր, կարկաչափոս աղբյուրի հնչյուններով կենարար,

անապական ու մաքուր, մեզ միշտ հայ պահող երգերից շատերը, Քելե?Քելեե, Դե յամանե, «երկինքն ամպել է», «Շողոմեր ջան» և այլն: Կոմիտասը և նրա երգը քայլում են հայ ժողովրդի հետ՝ հավերժ ճանապարհում: Այդ երգերը թախծում են նրա սրտի պես, խորունկ վերքերի պես, լայն ու լուսավոր՝ հոգու պես, արև ու երջանկություն տենչացող:

Միջոցառմանը ներկա էին ուսուցիչներ, ծնողներ, հրավիրված հյուրեր, ովքեր մեծ հետաքրքրությամբ և հուզվածությամբ ընթերցանեցին մեծ Կոմիտասի անմահ երաժշտական գոհարները:

Հավերժ երգուն, մորմոռուն է
Աստվածային Կոմիտասսը,
Կախարդուն է ու մոգուն է
Աստվածային Կոմիտասը:
Ամենամեծ նահատակը՝
Ամենահայր՝ ամենահայ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի տարրական դասարաններում անցկացվեցին օրինակելի դասեր Մայրենի և Մաթեմատիկա առարկաներից: Դասալսումները կատարեցին մասնախումբը և տնօրինությունը նոյեմբերի 15-ին Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանում դասվար Զգ Մակարյան, անցկացվեց բաց դաս Մայրենի առարկայից ինքնուրույն ընթերցանություն թեմաներից: Թեման նվիրված էր Ժողովրդական բանահյուսությանը: Աշակերտներին արձակուրդի ընթացքում հանձնարարվել էր Ժողովրդական բանահյուսության լրացուցիչ նմուշներից ընթերցել հեքիաթներ, անգիր սովորել հանելուկներ, առած՝ասացվածքներ, շուտասելուկներ, սուտասելուկներ, օրինակներ, օրորոցայիններ: Քանի որ Մայրենիի, Երեք աղջիկների հեքիաթը նույնպես առնչվում էր այս թեմային, դասը կառուցվեց հեքիաթի բեմականացման միջոցով: Ներկաները վերհիշեցին մոռացված քարտիկի խաղը: Դասը անցավ հետաքրքիր գաշակերտները դասին ներկայացել էին պատարասով:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում 3?րդ դասարանը՝ դասվար Ս. Վարդանյան, ներկայացրեց հետազոտական նախագծային աշխատանք՝ ,Իմ հայրենիքը և մեր մեծերը խորագրով՝ դաս?միջոցառումը: Նրանք ներկայացրին մեր

մեծերից Կոմիտաս վարդապետի և
Հովհաննես Թումանյանի կենսագրա-
կանը և ստեղծագործություններից,
ընդհանուր տեղեկություններ:

Ստեղծագործությունները ներկայացվեցին երգի, պարի և բեմականացման ձևով: Եվս մեկ անգամ 3?րդ դասարանցիները իրենք աշխատանքով ապացուցեցին, որ մենք ունենք մշակութային արժեքներ և այն պարտավոր ենք պահպանել:

Օրինակելի դաս անցկացվեց 4?րդ դասարանում ,Մաթեմատիկա ե առարկայից: Դասի թեման էր ,Բազմանիշ թվի բաժանումը երկնիշ թվին: Աշակերտները ներկայացրին մաթեմատիկական գործողությունների միջև կապը, գծապատկեր կազմեցին, նշեցին բազմանիշ թիվը կարգերի և դասերի միջոցով: Կատարեցին բազմանիշ թվի բազմապատկումն գրատախտակին: Լուծեցին խնդիր՝ համառոտագրության գծապատկերը կիրառելով: Դասի երկրորդ մասում սովորեցին քայլաշարի միջոցով բաժանում նշանի թվի վրա: Աշակերտները յուրացրին թեման, ամփոփեցին հարցերի միջոցով:

Հարգելի՜ համազուլողացիներ, Քեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթին տրված ձեր հարցազրույցները մեր դպրոցականների համար ինքնահաստատման դաս են, որով մեր երեխաները ձեր կողմից տրված նյութերը շարադրում են իրենց հայացքների և ընկալումների շրջանակում, ավելի համառոտ ձևով: Սենք ներողություն ենք խնդրում, եթե չենք մանրամասնում այն, ինչի մասին մանրամասն խոսել եք դուք:

Հարգանքով՝ Քեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:

4 «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈՆԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 10. 2019 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝
Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 500
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru